ԵՐՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

ՆԱԽԱԳԻԾ

Կ-996$^{7}$-13.10.2016-Մի-010/3

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

*Հոդված 1.* 1985 թվականի դեկտեմբերի 6-ի Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 223-րդ հոդվածում՝

1) 1-ին կետից հանել «206$^{8}$» թիվը.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4-րդ կետ.

«4) սույն օրենսգրքի 206$^{8}$ հոդվածով նախատեսված դեպքում՝ մարդու իրավունքների պաշտպանի հայցադիմումով»:

**Հոդված 2.** Օրենսգրքի 206$^{8}$-րդ հոդվածում «քսանապատիկի չափով» բառերը փոխարինել «հարյուրապատիկի չափով» բառերով:

**Հոդված 3.** Օրենսգրքի 254-րդ հոդվածի 10-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 4.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: